ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

8-ը հունիսի 2015 թվականի թիվ 98- Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 2-Ի ԹԻՎ 37 - Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 126-րդ և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածներով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2015 թվականի մարտի 2-ի «Ոսկեվանի գյուղական բժշկական ամբուլատորիա>> պետական ոչ առևտրային կազմակերպության հիմնադրման մասին» թիվ 37-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումը՝

1) որոշման 2-րդ կետի <<կանոնադրությունը>> բառից հետո ավելացնել <<և փոխանցման ակտը>> բառերը,

2) որոշման 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. «Ոսկեվանի գյուղական բժշկական ամբուլատորիա>> փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Նելլի Գևորգյանին վերանշանակել «Ոսկեվանի գյուղական բժշկական ամբուլատորիա>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հ. ԱԲՈՎՅԱՆ

8 հունիսի 2015թ.
ք. Իջևան